

«Տէր Կոմիտասը կ'ըսէ, Նորին Բարձրութիւնը իր հպատակներուն միշտ շքանորհած է խղճի ազատութիւն, եւ ինք չի խորհիր, որ կաթոլիկ դառնալով՝ ինք ապրատամբած է: Իսկ անոնք, որոնք զինքը շնորհագուրկ ըրած են, Հոռով մարգոց պէս գիտնական մարգիկ չեն եւ իր թշնամիներն են: Անոնց դատողութիւնը ինքը կը մերժէ կրօնական խնդիրներու մասին, եւ կը հարցնէ Վէգիլիոյ, թէ կրնա՞յ ճշգրէլ թէ հայ ծէսը հոռոմէականէն նախընտրելի է»:

«Վէգիլը կը պատասխանէ. «Ես կը խորհիմ, որ անոնք երկուքն ալ վատ են, եւ ես քեզ մահուան կը դատապարտեմ քու ընդվզմանդ համար: Գալով մնացեալին՝ քու արիւնդ թող քեզ ամբաստանողներուն վրայ ըլլայ, եթէ քեզ դէմ սուտ կերպով վկայած են»: Տէր Յովհաննէս, նոր պատրիարքը, անոնց ամենէն կատաղին եւ եռանդուն հակակաթոլիկը, կը պատասխանէ. «Թո՛ղ այդպէս ըլլայ, Տէր, եւ գլխաւորաբար Փրանկ քահանաներուն վերայ, որոնք զինքը մոլորեցուցած են, եւ իրենց եկեղեցւոյն ու Հոռով Պապին ճանաչման քաշած»:

«Ատկէ վերջ Վէգիլը զայն գլխատելու հրաման կուտայ, ուրիշ երկու հայերու հետ, որոնք նոյն ատեն ձերբակալուած էին: (Նոյեմբերի) 25-ին կը հասնին գլխատման վայրը, ուր ան (Կոմիտաս) վճռականորէն կը քալէ՝ խրատելով յօժարակամ մահուան ենթարկուել կաթոլիկ հաւատքին համար իր ընկերակից տառապողները, իբր միակ ճշմարիտ կրօնի համար: Յետոյ ծնրադրելով՝ իր լեզուով աղօթքներ կը կրկնէ: Դահիճը անոր կապոյտ գլխանոցը (որ հայոց մեծ մասը կը կրեն) կը վերցնէ եւ իր սուրին մէկ հարուածով կը կտրէ գլուխը, յետոյ կտրուած գլուխը անգլուխ մարմնոյն ծունկերուն վրայ ձեռքերուն մէջ կը դնէ, նոյնը կատարելով միւս երկուքին ալ: Անոնց մարմինները քսանեւչորս ժամ հրապարակին վրայ կը մնան, որմէ վերջ իրենց

ազգականները հրաման կը ստանան դանոնք թաղելու»³²):

Չամչեանին հետեւելով՝ Օրմանեան ալ կ'ընդունի, որ Տէր Կոմիտասի երկու ընկերները չեն գլխատուած: Մերինները Նոյեմբերի տեղ Հոկտեմբեր կը նշանակեն գլխատման ամիսը: Սարուխան հրատարակած է Գաղղիական դեսպանին «1707 Նոյեմբեր 5» թուակիր նամակը, ուր կը կրկնուին Մօթլըէյի վկայութիւնները: Մօթլըէյ, սահայն, ա'լ աւելի չափաւոր եւ անկողմնակալ լեզու մը ունի (համեմատէ «Հանդէս Ամսօրեայ», 1929, էջ 436) եւ մանրամասնութեանց մէջ քիչ մը կը տարբերի:

* * *

1709-ին Պարսկաստանէն լուր կը հասնի Կ. Պոլսոյ Փրանսական դեսպանին, Յունուարի սկիզբները. «Վերապատուելի Հայր Վիլլիտ (Villiti—), Յիսուսեան մը, Պարսկաստանի Քարոզչաց զերամեծարը, կը գրէ միւլթարագիր մըն ալ Ղալաթիոյ մեծաւորին, կաթոլիկ հաւատքին տարածման դէմ Դրան հալածանքի մասին, կը գովէ Պարսից վեհապետին չափաւորութիւնը Քարոզչաց հանդէպ, նոյն ատեն կը հաւաստէ, որ հայ աղանդաւորներ (որոնց սխալներուն ցանկը զրկած է) ինքզինքնին անարժան ըրած են նորին ամենայն Քրիստոնէական բարձրութեան (դեսպանը), որ ստիպած էր Փրանսացի ծովահանները վերադարձնել զանազան առեւտրականներէ իրենց առած ինչքերը, մինչ այդ առեւտրականներուն (հայ) եղբայրները կ'ընդդիմանան հաւատքի տարածման դէմ, եւ իրենց յամառութեամբ կը մնան իրենց սխալներուն մէջ»³³):

Հոս յիշուած Հայր Վիլլոտէին (Fr. Jacques Villottee) է, որուն նամակը, Հոռով գրկուած, Աղեքսանդր Կաթողիկոս Զուղայեցին իբր կաթոլիկամերձ կամ կաթոլիկամիտ կը ներկայացնէր, ինչ որ բո-

32) ԱճՊ՝ էջ 282-283:

33) ԱճՊ՝ էջ 287: